Ուսանողի ամբիոն

ԱՆԱՀԻՏ ՍԵՅՐԱՆԻ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա,
հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոն,
3-րդ կուրսի ուսանողուհի
E-mail: anulhyan13@gmail.com
Doi: 10.58580/18290019-2023.1.64-59

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի
երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի՝ 2.11.2023 թ.
նաև ղեկավարի՝ Անահիտ Հովհաննեսի Բաղդասարյանի 10.10.2023 թ.,
ընդունվել է տպագրության՝ 10.11.2023 թ.,
ներկայացրել է հեղինակը՝ 2.10.2023 թ.

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ՝ ՔԱՆՈՆԱՀԱՐ, ԿՈՄՊՈԶԻՏՈՐ, ՄԱՆԿԱՎԱՐԺ

Ամփոփում

Ծովինար Հովհաննիսյանը՝ հայ քանոնահարների ներկա սերնդի առավել ճանաչված ներկայացուցիչներից է: Հայտնի է իր բազմակողմանի, եռանդուն գործունեությամբ. տաղանդավոր կատարող, քանոնի բազմաթիվ և բազմաժանր ստեղծագործությունների, նաև նվագարանի մի շարք կատարողական նորամուծությունների հեղինակ, փորձառու, բազմահմուտ, համբավավոր մանկավարժ: Ծ. Հովհաննիսյանի մասին տարբեր առիթներով և տարբեր բովանդակությամբ հոդվածներ, մագիստրոսական թեզեր, փաստագրական ֆիլմեր են ստեղծվել: Ներկա հոդվածում փորձ է արվում հնարավորինս բազմակողմանիորեն ներկայացնել Ծ. Հովհաննիսյանի բազմաբովանդակ և բազմաբեղուն գործունեությունը:

Բանալի բառեր. *Ծովինար Հովհաննիսյան, քանոն, քանոնի հայկական դպրոց, հայկական լադային համակարգ, ռապսոդիա, Կոնցերտ քանոնի համար:*

Abstract

3rd year student at the Department of Armenian Traditional Music Performing Arts, Yerevan Komitas State Conservatory after Komitas ***Anahit Seyran Harutyunyan. - "Tsovinar Hovhannisyan - qanun player, composer, teacher".***

Tsovinar Hovhannisyan stands out as a highly acclaimed figure among the current generation of Armenian qanun players. She is renowned for her versatility and boundless energy - a talented performer, author of numerous and multi-genre works of the canon, as well as a number of performance innovations for the orchestra, an experienced, multi-skilled, renowned teacher. A number of articles, master's theses, documentary films with different contents have been dedicated to her on different occasions. In this article, an attempt has been made to provide a comprehensive overview of Tsovinar Hovhannisyan's multifaceted and productive contributions to the world of music.

Key Words: *Tsovinar Hovhannisyan, qanun, Armenian modal system, rhapsody, Concerto for qanun.*

Абстракт

Студентка 3 курса Ереванской государственной консерватории им.Комитаса, кафедра исполнительского мастерства армянской традиционной музыки ***Анаит Сейрановна Арутюнян. - "Цовинар Ованнисян - канонистка, композитор, педагог".***

Цовинар Ованнисян - одна из наиболее видных представителей современной армянской школы игры на каноне. Известна своей разносторонней и активной деятельностью. Талантливая канонистка, автор многочисленных оригинальных сочинений в различных жанрах и переложений для канона, создатель целого ряда новых технических средств исполнительства на каноне, многоопытный педагог. Ц. Ованнисян посвящены статьи, документальные фильмы, работы магистрантов Ереванской государственной консерватории имени Комитаса и т.д. В представленной ниже статье мы попытались по возможности широко и полно охватить многогранное творчество Ц. Ованнисян.

Ключевые слова: *Цовинар Ованнисян, канон (музыкальный инструмент), армянская школа игры на каноне, ладовая система армянской монодической музыки, рапсодия, Концерт для канона.*

Պրոֆեսոր Ծովինար Հովհաննիսյանի հեղինակած հրատարակությունները

Publications authored by Professor Tsovinar Hovhannisyan

Издания профессора Цовинар Ованнисян

Ծովինար Հովհաննիսյան
Tsovinar Hovhannisyan
Цовинар Ованнисян

Ծովինար Հովհաննիսյանը և իր ղեկավարած քանոնահարների անսամբլը
Tsovinar Hovhannisyan and the Qanon Ensemble led by her
Цовинар Ованнисян и руководимый ею ансамбль канонистов

Նախաբան

Հոդվածում անդրադարձ է կատարվում հայկական քանոնի ժամանակակից կատարողական դպրոցի հայտնի ներկայացուցիչներից մեկին՝ քանոնահար, կոմպոզիտոր, դիրիժոր Ծովինար Հովհաննիսյանին:

Ծ. Հովհաննիսյանը հանրապետական և միջազգային մրցույթ-փառատոների դափնեկիր է, Գրիգոր Նարեկացու հուշամեդալակիր, Մանկավարժական փառքի շքանշանակիր, ՀՀ վաստակավոր մանկավարժ, Կատարողական արվեստի Համաշխարհային ասոցիացիայի պատվավոր դոկտոր, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ) պրոֆեսոր:

Կյանքը և գործունեությունը

Ծնվել է Գյումրիում (Լենինականում) 1965 թ.: 1976-1981 թթ. սովորել է Գյումրու Շերամի անվան 5-րդ երաժշտական դպրոցում (դաշնամուրի դասատու Անահիտ Հովհաննիսյան, քանոնի դասատու՝ Մովսես Խորենացու մեդալակիր, բազմահմուտ և ճանաչված մանկավարժ Լաուրա Մելիքյան, 1981-1985 թթ. Գյումրու Կարա-Մուրզայի անվան երաժշտական ուսումնարանում (դասախոսներ՝ Ռուզաննա Գևորգյան՝ քանոն, Նինա Օսևսկայա՝ դաշնամուր, Ազատ Շիշյան՝ կոմպոզիցիա), և 1985-1990 թթ. ԵՊԿ-ում քանոնի հայ ժամանակակից կատարողական արվեստի լավագույն ներկայացուցիչներից մեկի՝ պրոֆեսոր Ալվարդ Միրզոյանի մասնագիտական դասարանում: Քանոնին զուգահեռ, Հովհաննիսյանը մասնագիտացել է նաև որպես ժողովրդական նվագարանների նվագախմբի դիրիժոր պրոֆեսոր Կարինե Աթանեսյանի դասարանում: Գերազանցությամբ ավարտելով 1990-1993թթ. ԵՊԿ շարունակում է ուսումը նույն բուհի ասպիրանտուրայում կոմպոզիտոր, պրոֆեսոր, Հայաստանում քանոնի դպրոցի հիմնադիր Խաչատուր Ավետիսյանի ղեկավարությամբ: Հովհաննիսյանն աշխատել է տարբեր նվագախմբերում՝*

* Լաուրա Մելիքյանը մինչ օրս ղեկավարում է նույն դպրոցի քանոնի մասնագիտական դասարանը՝ կրթելով հայ քանոնահարների նորանոր սերունդներ:

Գյումրու Տեքստիլագործների ակումբին կից և Գյումրու պետական ժողովրդական նվագարանների նվագախմբերում, Թաթուլ Ալթունյանի անվան երգի պարի պետական անսամբլում, հիմնադրել է Աթենքի «Սայաթ-Նովա» անսամբլը: Համերգներով ելույթներ է ունեցել քամանչահար Գագիկ Մուրադյանի «Գուսան» խմբի հետ: Բազմաթիվ համերգներ է ունեցել Հայաստանում և արտասահմանում (Ֆրանսիա, Հունաստան, Ռուսաստան, Շվեյցարիա, Վրաստան, ԱՄՆ, Գերմանիա, Իտալիա, Բուլղարիա, Լիբանան, Չինաստան, Ճապոնիա, Ավստրալիա և այլն): 2013-ին Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ կատարել է Արամ Սաթունցի «Կոնցերտինոն»՝ կոմպոզիտորի 100-ամյակին նվիրված հոբելյանական համերգին (դիրիժոր՝ Ռուբեն Ասատրյան): 2016-ին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում կայացավ Հովհաննիսյանի երկու քանոնի համար գրված «Կոնցերտ 3»-ի պրեմիերան՝ տեղի պետական կամերային նվագախմբի, հեղինակի և երիտասարդ քանոնահար Նարեկ Կազազյանի կատարմամբ (դիրիժոր՝ Բեդրոս Փափազյան):

Հարկ է նշել, որ Հովհաննիսյանը կոմպոզիտոր Գրիգոր Հախինյանի՝ մինչ այդ բարդագույն և անմատչելի համարվող «Քանոնի կոնցերտ»-ի առաջին կատարողն է, եղել, որով հաղթող է ճանաչվել Սայաթ-Նովայի անվան հանրապետական առաջին մրցույթում (1987 թ.):

Բազմաբովանդակ է Հովհաննիսյանի ստեղծագործական գործունեությունը: Կատարողական ակտիվ գործունեության հետ մեկտեղ Հովհաննիսյանը հեղինակել է բազմաթիվ մեծ ու փոքր կտավի, քանոնահարների հասակային տարբեր խմբերի համար նախատեսված էտյուդներ, պիեսներ, իմպրովիզներ, բալլադներ, ռապսոդիաներ, կոնցերտներ և այլն: Դրանք մեծ մասամբ հրատարակվել են (տե՛ս հոդվածին կից «Ծովինար Հովհաննիսյանի հեղինակած աշխատությունների ցանկ»-ը), և զգալիորեն հարստացրել են հայ քանոնի երկացանկը: Առանձնահատուկ ուշադրության են արժանի հեղինակի ազգային նվագարանների համար ստեղծած վարժությունները հայկական ձայնակարգային (լադային) համակարգում [13, 14, 16]: Ծ. Հովհաննիսյանը հեղինակել է նաև երգեր ձայնի և դաշնամուրի համար:*

*Բացի օրիգինալ ստեղծագործություններից Հովհաննիսյանը կատարել է փոխադրումներ, ձայնագարդումներ**, մշակումներ քանոնի համար: Հատուկ ուշադրության են արժանի Հովհաննիսյանի «Արևելաշարերն» ըստ Նիկողայոս Տիգրանյանի «Իրանական մուղամներ դաշնամուրի համար» ժողովածուի:*

Կոմպոզիտոր Արզաս Ոսկանյանը, բարձր գնահատելով «Արևելաշարերը», ասել է. «Ծովինար Հովհաննիսյանը մուղամները ետ դարձնելով հարազատ միջավայր (քանոն), հետն ունենալով ակադեմիականն ու ճաշակավորը, նաև օգտագործելով իր զինանոցում իր կողմից քանոնի ստեղծած նոր, մինչ այդ անհայտ կատարողական հնարքներ, ստեղծել է բացառապես արվեստի ամենաբարձր չափանիշներին համապատասխանող ստեղծագործություններ»:[25]

Հովհաննիսյանը փոխադրել է Էդվարդ Միրզոյանի ջութակի և դաշնամուրի համար «Ինտրոդուկցիա և անընդհատ շարժում» հայտնի ստեղծագործությունը, որն աչքի է ընկնում տեխնիկական բարդություններով, կատարողական նորամուծություններով և բարձր գեղարվեստականությամբ (պրեմիերան կայացավ 2021թ.-ին վիրտուոզ քանոնահար, Հովհաննիսյանի սան Կիմա Ավետիսյանի կատարմամբ): Նշենք և Հովհաննիսյանի հեղինակած Ռոմանոս Մելիքյանի երգերի («Զմրուխտի» շարքից) և ռոմանսների փոխադրումները քանոնի համար: Փոխադրումները նախատեսված են մենանվագ քանոնի, նաև երկու, երեք քանոնների,ինչպես նաև քանոնի և դաշնամուրի համար: Նշենք, որ Հովհաննիսյանի ստեղծագործությունները կատարվում են և այլ երկրներում, վերջիններիս ազգային տարբեր նվագարաններով:*

Հովհաննիսյանի գրչին է պատկանում ՀԽՍՀ ժողովրդական արտիստուհի, ԵՊԿ-ի պրոֆեսոր Անժելա Աթաբեկյանին նվիրված մենագրությունը [7]:

Հատկանշական են Հովհաննիսյանի նորարարությունները քանոնի կատարողական արվեստի ասպարեզում: Դրանք, իր իսկ Հովհաննիսյանի կատարմամբ ներկայացվել են «Հայկական նվագարաններ» ֆիլմաշարի՝ քանոնի մասին ֆիլմում (ռեժ.՝Ռիտա Շառոյան, 2013 թ.): Երաժշտագետ Սեդա Շեյրանյանն այս առիթով գրել է [5]. «Քանոն նվագարանի պատմության մեջ Ծ. Հովհաննիսյանը կմտնի որպես կոմպոզիտոր-նորարար, կատարող և մանկավարժ: Նրա նորարարությունը դրսևորվեց առաջին հերթին գործիքի մեկնաբանման ոլորտում՝ բազմաձայն ակորդային կամ ենթաձայնային կատարմամբ՝ հիմք ընդունելով Արշավիր Ֆերջույանի («Բողոք»), Խաչատուր Ավետիսյանի (Սոնատներ), Երվանդ Երկանյանի («Ռապսոդիա») ստեղծագործությունները: Ծ. Հովհաննիսյանի մշակած և կիրառվող՝ ինքն իրեն միաժամանակյա նվագակցելու, քանոնը, որպես «բազմաշերտ» գործիք մեկնաբանելու և հնչեցնելու տեխնիկան թույլ տվեց այսուհետ կատարել բարդ, բազմաձայն ստեղծագործություններ, հավասարաչափ օգտագործելով երկու ձեռքի բոլոր մատները» [13]: Հովհաննիսյանի կատարողականության կարևոր հատկանիշներից են նաև դինամիկայի բազմապիսի նշանների լայն կիրառումը և այդ նշանների ճկուն ու գունագեղ անցումները, օրինակ՝ աստիճանական նրբին crescendo-ներ, diminuendo-ներ, subito piano-ներ, sforzando-ներ, նաև տեմբրային հարուստ գունախաղ և այլն:

---

* Քանոնի կատարողականության, նաև երկացանկի հարստացման գործում մեծ ներդրում ունեն նաև մի շարք քանոնահարներ ևս՝ Խաչատուր Ավետիսյան, Անժելա Աթաբեկյան, Ալվարդ Միրզոյան, Մարինե Ասատրյան, Անահիտ Վալեսյան, Կարինե Հովհաննիսյան, Շուշանիկ Սաղաթելյան, Լիանա Մարտիրոսյան, Գայանե Աբաջյան և այլք:

** Ձայնագարդում՝ հայ ավանդական (հիմնականում հոգևոր երգերի) մշակման սկզբունք, երբ բնագրային մեղեդին պահպանվում է անփոփոխ և ուղեկցվում է հարմոնիկ հնարներով, նաև մեղեդուն հարազատ ենթաձայներով:

* Փոխադրումները կատարվել են երաժշտագետ՝ ԵՊԿ-ի պրոֆեսոր Արմեն Բուդաղյանի հորդորով:

Արվեստի բնագավառի հայկական և միջազգային հեղինակավոր կազմակերպությունները համագործակցում են Հովհաննիսյանի հետ՝ թողարկելով ձայներիզներ, տեսահոլովակներ, հեռուստահաղորդումներ, ֆիլմեր, կազմակերպելով քանոնահարի հեղինակային ստեղծագործությունների պրեմիերաներ աշխարհի տարբեր երկրներում: Նկարահանման ընթացքում է «Wishes as seeds» փաստագրական ֆիլմը (ռեժ.՝ արգենտինահայ Սիլվինա Դեր Մեգուրդիշյան), որտեղ Հովհաննիսյանը ներկայացված է աշխարհի հինգ լավագույն քանոնահարների շարքում:

Այսօր Հովհաննիսյանը ճանաչված է որպես բազմահմուտ, վաստակաշատ մանկավարժ: Իր նվագարանին՝ քանոնին, նաև քանոնի արվեստին անհունորեն նվիրված խանդավառ անձնավորություն է, և դրանով իսկ «վարակում է» իր բազմաթիվ սաներին: ԵՊԿ-ի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի բազմամյա պրոֆեսոր է: Միաժամանակ, սկսած 2006 թ. վերահիմնադրել և ղեկավարում է Ա.Սպենդիարյանի անվան երաժշտական մասնագիտական դպրոցի ազգային նվագարանների բաժինը:

Հովհաննիսյանը ստեղծել է քանոնի իր ուրույն կատարողական դպրոցը: Շնորհիվ դասավանդման նոր մեթոդների, նրա սաները կարճ ժամանակահատվածում վարպետորեն տիրապետում են նվագարանին, և հասնում մեծ հաջողությունների ոչ միայն Հայաստանում, այլև արտասահմանում՝ մասնակցելով միջազգային մրցույթների, փառատոնների և համերգների (Սմիթսոնյան Փառատոն, Վ. Սպիվակովի մրցույթ-փառատոն, Դելֆյան խաղեր, World Art Games, «Արտ-Մյուզիք», «Ոսկե տավիղ», «Վերածնունդ», «Խ. Ավետիսյանի անվան համահայկական մրցույթ-փառատոն» և այլն):

Արտասահմանից բազմաթիվ շնորհակալական նամակներ են հղվել Հովհաննիսյանին՝ սաների փայլուն ելույթների, հայկական քանոնը աշխարհի տարբեր բեմահարթակներում պատվով ներկայացնելու համար: Այս առիթով, 2010 թ. Երևանի քաղաքապետարանը նրան ճանաչել է «Տարվա լավագույն ուսուցիչ» և հանձնել պատվոգիր: 2012 թ. Հովհաննիսյանը ստացել է շնորհակալագիր ՀՀ Մշակույթի նախարարից Ավստրիայում (Վիեննա) կայացած «Եվրատեսիլ 2012» դասական նվագարանների մրցույթում քանոն ազգային նվագարանով III մրցանակ շահած Հայաստանի մասնակից Նարեկ Կազազյանին լավագույնս նախապատրաստելու համար:

2019 թ. Արա Գևորգյանի «Երևան 2800» տեսահոլովակի համար հեղինակի խնդրանքով 200 քանոնահարներից բաղկացած անսամբլում Հովհաննիսյանն իր սաներից ներկայացրել է շուրջ 170 քանոնահարների:

Հովհաննիսյանը ՀՀ Մշակույթի նախարարության հանձնարարությամբ, 2008 թ. գործուղվել է հանրապետության մարզեր՝ երաժշտական և արվեստի դպրոցներում մեթոդական աշխատանքներ, ուսուցիչների վերապատրաստման և վարպետության դասընթացներ անցկացնելու նպատակով: Վարպետության դասեր է անցկացրել նաև ՀԲՀՄ (AGBU)կազմակերպության նախաձեռնությամբ արտասահմանից եկած քանոն սովորող երիտասարդների համար:

Հովհաննիսյանի գործունեության խոսել և գրել են երաժշտագետներ՝ Անահիտ Կիրակոսյանը, Սեդա Շեյրանյանը, կոմպոզիտոր և երգիչ՝ Արզաս Ոսկանյանը, քանոնահարներ Անժելա Աթաբեկյանը, Լաուրա Մելիքյանը, Ալվարդ Միրզոյանը, Մարինե Ասատրյանը, ուդահար՝ Միհրան Դեմիրճյանը և ուրիշներ, նաև Հովհաննիսյանի սաները:

Վերջաբան

Անգնահատելի է Ծովինար Հովհաննիսյանի վաստակը քանոնի հայ դպրոցի զարգացման գործում: Ավելին, պրոֆեսորի՝ կատարողի, կոմպոզիտորի, մանկավարժի եռանդուն, բազմաբեղուն գործունեությունը կարելի է դիտարկել որպես առանձնահատուկ երևույթ հայ արդի երաժշտական մշակույթում:

Ծովինար Հովհաննիսյանի հեղինակած աշխատությունների ցանկ.

1. «Էտյուդներ և պիեսներ քանոնի համար», Ե., «Լուսաբաց» հրատ., 2004:

2. «Կոնցերտներ և ռապսոդիա», «Լուսաբաց» հրատ., Ե., 2004:

3. «Պիեսների ժողովածու քանոնի համար», «Լուսաբաց» հրատ., Ե., 2004 :

4. «Երգեր ձայնի և դաշնամուրի համար»,Պրակ I, «Տիգրան Մեծ» տպ-ն, Ե., 2006:

5. «Կոնցերտ N 3» երկու քանոնի համար, Պրակ IV «Տիգրան Մեծ» տպ-ն, Ե., 2006 թ.

6.«Պիեսներ քանոնի համար և Ռապսոդիա N 2», Պրակ V, «Տիգրան Մեծ» տպ-ռ.,Ե., 2006:

7.«Անժելա Աթաբեկյան» մենագրություն, ԵՊԿ հրատ., Ե., 2007 :

8. «Պիեսներ» ժողովածուն, Պրակ VI, ԵՊԿ հրատ., Ե., 2008 թ.

9. «Դպրոցականի ալբոմ» ձեռնակ քանոնի համար, Պրակ VII, ԵՊԿ հրատ., «ՎԱ-ՆԱ» ՍՊԸ-ում, Ե., 2008:

10. «Իմպրովիզ», Պրակ VIII, ԵՊԿ հրատ., «Լիմուշ», (ձայնասկավառակի հետ), Ե., 2009:

11.«Մանկական ալբոմ», Պրակ IX, ԵՊԿ հրատ., Ե., 2009:

12. «Երաժշտական և արվեստի դպրոցների ժողովագարանների մասնագիտական դասարանների ծրագրեր»/ համահեղինակ, «Նշանակ» հրատ., Ե., 2009:

13. «Մեթոդական ձեռնարկ»/հայկական լադային համակարգ/, գիրք 1, «Լիմուշ» հրատ., Ե., 2010:

14. «Մեթոդական ձեռնարկ»/հայկական լադային համակարգ/,գիրք 2, «Լիմուշ» հրատ., Ե., 2010:

15. «Էքսպրոմտ» նվագախմբային պարտիտուր ժողովագարանների նվագախմբի և մենակատար քանոնի համար, «Լիմուշ» հրատ., Ե., 2010:

16.«Վարժությունների մեթոդական ձեռնարկ» /հայկական և դասական լադային համակարգում/ գիրք 3, «Լիմուշ» հրատ., Ե., 2011:

17. «Փոխադրումներ, մշակումներ և օրիգինալ ստեղծագործություններ քանոնի համար», Պրակ X, «Լիմուշ» հրատ., Ե., 2013:

18. «Փոխադրումներ, մշակումներ և օրիգինալ ստեղծագործություններ քանոնի համար», Պրակ XI, «Լիմուշ» հրատ., Ե., 2015:

19. «Փոխադրումներ, մշակումներ և օրիգինալ ստեղծագործություններ քանոնի համար», Պրակ XII, «Լիմուշ» հրատ., Ե., 2015:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հովհաննիսյան Ծ.,* Վարժությունների մեթոդական ձեռնարկ քանոնի համար, (Հայկական լադային համակարգ, «Գիրք 1»), Եր., Լիմուշ, 2010 թ.:

Hovhannisyan Ts, "Methodological manual of exercises for the qanun" (Armenian modal system, "Book 1"), Yerevan "Limush" publishing house, 2010.

REFERENCES

Hovhannisyan Ts, arzhuthyunneri methodakan dzhernark qanoni hamar, (Haykakan ladayin hamakarg, "Girq 1"), Yer., Limush , 2010 th..

Հեղինակի մասին. *ԱՆԱՀԻՏ ՍԵՅՐԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի 3-րդ կուրսի ուսանողուհի:*

About the author: *ANAHIT SEYRAN HARUTYUNYAN - 3rd year student at the Department of Armenian Traditional Music Performing Arts, Yerevan Komitas State Conservatory after Komitas.*

Об авторе: *АНАИТ СЕЙРАНОВНА АРУТЮНЯН кнонистка, студентка 3 курса кафедры исполнительского мастерства армянской традиционной музыки. Ереванской государственной консерватории им. Комитаса.*